

ՆԵՐՄՈՐԱՅԻՆ ԴԵՂՁԵՐԸ

(Շար. նախորդ. ԹԻԼԷՆ ԵՆ ՎԵՐՋ)

ՁՈՒԱՐԱՆՆԵՐԸ.— Ձուարանի սպիտակամարմինը (*Corpus Luteum*) կը նկատուի անշուշտ անոր հորմոնը: Ասիկա է որ կը ղեկավարէ դաշտանը և կը պատրաստէ արգանդի ներքնաթաղանթը՝ բեղմնաւորուած ձուիկին համար. և տարակոյսէ դուրս է որ յղութեան նախնական օրերու փոխուքները անոր պակասութեան արդիւնք են: Դաշտանադադարի ատեն, երբ կնոջ ֆիզիքական ու մտաւորական վիճակը, խորունկ անկումներու նշաւակ կը դառնայ, ձուարանի մզածոն (*extrait*) միակ դեղն է որ կրնայ կարգի բերել այդ խանգարումները:

ԸՆԿԻՐՔԸ (*Placenta*).— Յատկանշական է որ ընկերքը կը պարունակէ զօրաւոր հորմոն մը որը մեծապէս կը գրգռէ ստինքները՝ լաւագոյն կերպով և մեծ քանակութեամբ կաթ արտադրելու տղաբերքէն վերջ: Անյիշատակ ժամանակներէ ի վեր դիտուած է որ կենդանիներէն ոմանք կը լափեն իրենց ընկերքը: Հաւանաբար այս՝ միայն մաքրութեան բնագոյն չէ որ ընել կուտայ: Յղութեան մէջ ստինքներու խոշորնալը մասամբ ընկերքի մասնաւոր նիւթին խթանովն է:

ՍՏԻՆՔՆԵՐԸ.— Հաստատուած է որ ստինքները ձուարանի հորմոնով կը զարգանան: Նիւթ մը զոր նոյն խիստ սաղմը իր մէջ կը զարգացնէ, պատճառն է կաթի (մօր մէջ) պատրաստութեան: Կարելի չէ եղած որոշ հորմոն մը հանել ստինքներէն, բայց փորձարկութիւնները տարակոյս չեն թողուր որ իրապէս կայ մարմին մը: Այդ ներքնածոր նիւթը, տղաբերքէ վերջ, կը կասեցնէ ձուարաններու գործունէութիւնը: Կաթնատուութեան չրջանի դաշտանադադարը, և հաւանաբար ձուարակութեան դադարումը, ստինքներու անգործութեան տակ են: Հոս միջանկեալ մը յղութեան չրջանի փոխուքի մասին: Բաւական լուրջ է այս չրջանը և կը պահանջէ արագ եւ կտրուկ դարմաններ: Այս վիճակին առաջին պատճառը ինչպէս յիշեցինք ծուլարանն է, այսինքն իր արտադրած սպիտակամարմինի անկատար գործունէութիւնը: Իւրաքանչիւր կին իր սեռային կեանքի ժամանակամիջոցին շարունակաբար կ'իւրացնէ այդ սպիտակամարմինները: Յղութեան սկզբնաւորութեամբ՝ այս իւրացումը կամ ծծումբ կը դադրի: Յղութեան սպիտակամարմինը երթալով կը խոշորնայ մինչեւ որ իր մեծութեան գագաթնակէտին կը հասնի երրորդ ամսուն, լսակէ անդին ան հետզհետէ կը ծծուի մարմինէն և անա թէ ինչու

փախուքը կը դադրի բնդհանրապէս այդ ատեն, եթէ միայն սպիտակամարմինն է պատճառը: Հոս ուրիշ պատճառներ, իմ նիւթէս դուրս են:

ԱՐՈՐԶԻՔԵՆԵՐԸ.— Կը պատարաստեն արտաքին նիւթ մը սերմը՝ բեռնաւորութեամբ սերմնապնդաններով: Ներքնածոր նիւթը պատասխանատու է սեռային այն երկրորդական նշաններուն, որոնք ի յայտ կու գան արբուներէ ատեն: Սեռային գրգռականութիւնը (*libido*) հասնարար արդիւնք է ներքնահոս հորմոնին: Ասոր կանխորոշութեամբ չափով հոսումն է որ կ'որոշէ արբուներէ հասնիրը:

ԳԵՂՁԵՐՈՒ Է ԱՍԻԱՍԱՐԱՆԵՌՈՒԹԻՒՆԸ.— Գեղձաբաններ չափունակական ապացոյց ունին պնդելու որ օղակ մը կայ որ որոշապէս կը ղեկավարէ անոնց գործունէութիւնը, պահելով հաւասարակշիռ վիճակ մը մարմինին մէջ: Մէկուն գրգռումը՝ միւսն ալ կը գրգռէ կամ կը նախճահարէ: Օրինակ ձուարանը ներզաշնակ է վահանազեղծին, մաղասայլինն եւ վերերիկամային գեղմերուն հետ: Բայց այս պաշտօնակցութիւնը կրնայ նաեւ խանգարուիլ ստիւքով, ընկերքով եւ թիմուս գեղձով: Դարձեալ, սեռային գեղմերու կատարեալ աճումէն հոք, թիմուսը կը չքանայ հրապարակէն, որովհետեւ եթէ մնար, անոնք մանկական չրջանէն աւելի չէին անցներ, եւ սեռայիներկրորդական յատկութիւններն ալ երեւան չէին կրնար գալ: Դարձեալ, ընկերքը՝ կ'արգիլէ մաղասայլինին յետսակողմի մասէն ծորող հորմոնը: Ասի արդանդի կծկումին վրայ հզօրապէս կը ներգործէ, եւ կրնայ յզուլեան ժամանակը լրանալէ առաջ վիժման պատճառ ըլլալ: Ինչերորդ ամիսը լրանալէ վերջն է միայն որ հաւասարակշիռութիւնը կը խախտի եւ մաղասային գեղձը կուգայ աստղաբեկ, բեռնաւորութեամբ արդանդր պարպելու: Եթէ ինչպէս կը սկսին արգանդի կծկումները եւ ծննդաբերութեան ցուերը: Ասոնք եւ ուրիշ փոփոխութիւններ, ախրնախ կը ցուցնեն գեղձերու ունեցած փոխյարաբերութիւնները: Բժշկութեան մէջ չկայ աւելի մութ ու դժման փորձագիտութիւն մը, որքան այս նոր գիտութեան մէջ: Եւ յաւակնութիւնը չունիմ կատարեալը տուած ըլլալու: Պարզ փորձ մը ըրի ծանօթացնելու համար իրականութիւններ, որոնք իրենց հետաքրքրութեանը մէջ ա՛յնքան առիւթնոյ կ'են:

(Ուստըր-Ամերիկա)

ԲԺ. ԳԵՂԱՄ ՍԵՐՈԲԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարգաս եւ կ'օգտուիս, Ձե՛ս ՈՒՋԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարգան, սիրեն եւ օգտուին «Բուժանք»էն եւ զարգացնեն զայն: